ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

29 մարտի 2016 թվականի **թիվ 4** քաղ. Մոսկվա

Երկաթուղային տրանսպորտում անվտանգության հավաստագրի և դրա տրամադրման կարգի առնչությամբ պահանջների նկատմամբ ընդհանուր մոտեցումների մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 18-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան՝

հանձնարարում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ նորմատիվ ակտերը մշակելիս սահմանել անվտանգության հավաստագիրը տրամադրելու, տրամադրումը մերժելու, գործողության ժամկետը երկարաձգելու, գործողությունը կասեցնելու և գործողությունը դադարեցնելու կարգը, ինչպես նաև անվտանգության կառավարման համակարգի աուդիտներ անցկացնելու կարգը՝ ներառյալ անվտանգության կառավարման համակարգին ներկայացվող պահանջները՝ հաշվի առնելով Երկաթուղային տրանսպորտում

անվտանգության հավաստագրի և դրա տրամադրման կարգի առնչությամբ պահանջների նկատմամբ ընդհանուր մոտեցումները՝ համաձայն հավելվածի։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի
մարտի 29-ի թիվ 4 հանձնարարականի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Երկաթուղային տրանսպորտում անվտանգության հավաստագրի և դրա տրամադրման կարգի առնչությամբ պահանջների նկատմամբ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն փաստաթուղթը մշակված է՝ հաշվի առնելով «Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին» արձանագրության թիվ 2 հավելվածի՝ թիվ 1 հավելվածի 3-րդ և 7-րդ կետերը («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի թիվ 24 հավելված) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետություններ, Միություն) կողմից երկաթուղային տրանսպորտում անվտանգության ապահովման և փոխադրման գործընթացի կազմակերպման, իրականացման և ապահովման ժամանակ այն խախտումների առաջացման ռիսկերի նվազեցման նպատակներով, որոնք կարող են վնաս պատճառել մարդու կյանքին, առողջությանը, շրջակա միջավայրին, վնաս հասցնել փոխադրման ծառայությունների օգտատերերի, փոխադրման գործընթացի մասնակիցների և Միության տարածքում երրորդ անձանց գույքին, և սահմանում է անվտանգության հավաստագրի տրամադրման կարգը, այդ թվում՝ փոխադրողի կողմից երկաթուղային տրանսպորտում փոխադրման գործընթացի անվտանգության կառավարման համակարգի մշակմանն ու ներդրմանը ներկայացվող պահանջները։

2. Սույն փաստաթղթի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

«անվտանգության կառավարման համակարգի աուդիտ»՝ անվտանգության կառավարման համակարգի դիագնոստիկայի և սահմանված պահանջներին դրա համապատասխանության գնահատման համակարգված գործընթաց.

«ընթացակարգեր»՝ գործունեության կամ գործընթացի իրականացման սահմանված եղանակ.

«անվտանգության կառավարման համակարգ»՝ կառավարման փոխկապակցված և փոխգործակցող բաղադրիչների ամբողջություն, որոնք ընդգրկում են գործառնությունների, մոնիթորինգի, հսկողության և վերլուծության պլանավորման, նախապատրաստման ու կատարման գործընթացներ և ուղղված են փոխադրման գործընթացի անվտանգության նկատմամբ սահմանված պահանջների կատարման ապահովմանն ու մարդու կյանքին, առողջությանը, շրջակա միջավայրին վնաս պատճառելու, փոխադրման ծառայությունների օգտատերերի, փոխադրման գործընթացի մասնակիցների և երրորդ անձանց գույքին վնաս հասցնելու ռիսկերի նվազեցմանը.

«փոխադրման գործընթացի մասնակից»՝ անդամ պետության երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն, որը մասնակցում է փոխադրման գործընթացին։

Սույն փաստաթղթում օգտագործվող այլ հասկացություններ կիրառվում են «Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի թիվ 24 հավելված) սահմանված իմաստներով։

3. Երկաթուղային տրանսպորտում անվտանգության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

ա) անվտանգության ապահովման միջոցների կիրառման համակարգվածությունը և կոմպլեքսայնությունը.

բ) կանխարգելիչ միջոցների առաջնությունը.

գ) փոխադրման գործընթացի ծառայությունների օգտատերերի, մասնակիցների, հասարակության և պետության շահերի հավասարակշռության պահպանումը։

4. Անվտանգության հավաստագիրը տրամադրելու, տրամադրումը մերժելու, գործողության ժամկետը երկարաձգելու, գործողությունը կասեցնելու և գործողությունը դադարեցնելու կարգը, ինչպես նաև անվտանգության կառավարման համակարգի աուդիտներ անցկացնելու կարգը՝ ներառյալ անվտանգության կառավարման համակարգին ներկայացվող պահանջները, սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում են ենթակառուցվածքի օբյեկտները։

II. Անվտանգության կառավարման համակարգին ներկայացվող ընդհանուր պահանջները

5. Փոխադրման գործընթացի անվտանգության ապահովմանը ներկայացվող պահանջների կատարման նպատակներով փոխադրողի կողմից մշակվում, փաստաթղթերով ձևակերպվում, ներդրվում, արդիական վիճակում պահպանվում և շարունակաբար բարելավվում է անվտանգության կառավարման համակարգը՝ սահմանված սկզբունքներին և պահանջներին համապատասխան։

6. Անվտանգության կառավարման համակարգ ներդնելու, արդիական վիճակում պահպանելու և բարելավելու նպատակներով փոխադրողի կողմից՝

ա) իրագործվում է փոխադրման գործընթացի անվտանգության ապահովման ոլորտում քաղաքականությունը.

բ) պլանավորվում, սահմանվում և ներդրվում են փոխադրման գործընթացի անվտանգության ապահովման ոլորտում քաղաքականությունն իրագործելու համար անհրաժեշտ գործընթացներ.

գ) ներդրվում և կիրառվում են ընթացակարգեր, որոնցով նկարագրվում է գործունեության կամ գործընթացի իրականացման կարգը, այդ թվում՝ ռիսկերի, անհամապատասխանությունների, շտկող գործողությունների կառավարման, ներքին աուդիտների անցկացման, փաստաթղթերի և գրառումների կառավարման ընթացակարգեր.

դ) սահմանվում են անվտանգության ապահովման հարցերով ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց գործառույթները, լիազորություններն ու պատասխանատվությունը.

ե) սահմանվում և ապահովվում են փոխադրման գործընթացի անվտանգության ապահովման ոլորտում քաղաքականության իրագործման և գործընթացների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները.

զ) սահմանվում են չափանիշներ և մեթոդներ, որոնք երաշխավորում են, որ այդ գործընթացների կառավարումը և հսկողությունն իրականացվում են արդյունավոր կերպով.

է) անցկացվում են գործընթացների իրականացման մոնիթորինգ և վերլուծություն.

ը) իրականացվում են գործողություններ, որոնք անհրաժեշտ են պլանավորված արդյունքներին հասնելու և գործընթացները շարունակաբար բարելավելու համար.

թ) իրականացվում են գործողություններ, որոնք անհրաժեշտ են տեխնիկական խափանումները կանխելու, դրանց պատճառները վերացնելու և ռիսկերը կանխելու համար.

ժ) իրականացվում են միջոցներ, որոնք ուղղված են անվտանգության կառավարման համակարգի շարունակական բարելավմանը.

ժա) իրականացվում են անվտանգության կառավարման համակարգի արդյունավետությունը պահպանելու համար այլ գործողություններ։

7. Փոխադրման գործընթացի անվտանգության ապահովման ոլորտում քաղաքականությունն իրագործելիս սահմանվում է երկաթուղային տրանսպորտի ծառայությունների անվտանգության առաջնությունը, ապահովվում է փոխադրման գործընթացի անվտանգության ապահովման ոլորտում նպատակների սահմանման համար հիմքը։

8. Անվտանգության կառավարման համակարգը պետք է ընդգրկի գործընթացներ և ընթացակարգեր, որոնք ապահովում են՝

ա) անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով և փոխադրման գործընթացի անվտանգության ապահովման ոլորտում ենթակառուցվածքի օպերատորի ակտերով սահմանված պահանջների պահպանումը.

բ) սահմանված պարբերականությամբ սահմանված պահանջներին փոխադրողի գործունեության համապատասխանության գնահատման անցկացումը.

գ) երկաթուղային տրանսպորտում անվտանգության ապահովման ոլորտում վտանգների նույնականացման և ռիսկերի կառավարման միջոցների իրագործումը՝ ներառյալ մեթոդների, վտանգների բացահայտման համար պատասխանատու անձանց սահմանումը, ռիսկերի գնահատումը, միջոցառումների պլանի կամ շտկող գործողությունների մշակումը, ինչպես նաև դրանց իրագործումը.

դ) երկաթուղային տրանսպորտում հաշվառման վարումը և անվտանգության խախտումների պատճառների վերլուծությունը.

ե) կադրերի պատրաստվածության և որակավորման այն մակարդակի առկայությունը, որն անհրաժեշտ է սահմանված պահանջները կատարելու համար.

զ) երկաթուղային շարժակազմի, փոխադրողին պատկանող և փոխադրման գործընթացում ներգրավված ենթակառուցվածքի օբյեկտների, ինչպես նաև դրանց շահագործման պայմանների համապատասխանությունը սահմանված պահանջներին փոխադրման գործընթացի կազմակերպման, իրականացման և ապահովման ժամանակ։

9. Փոխադրողի կողմից իրականացվում է կողմնակի կազմակերպությանը կատարման համար փոխանցված և անվտանգության կառավարման համակարգը սահմանված պահանջներին համապատասխանելու վրա ազդող գործընթացների հսկողություն։

10. Սահմանված պարբերականությամբ փոխադրողի կողմից անցկացվում է անվտանգության կառավարման համակարգի ներքին աուդիտ։

III. Անվտանգության հավաստագրի տրամադրման կարգին ներկայացվող ընդհանուր պահանջները

11. Անվտանգության կառավարման համակարգի հավաստագրման անցկացման կարգն ընդգրկում է՝

ա) փոխադրողի կողմից սահմանված կարգով հայտի տրամադրումն այն անդամ պետության լիազորված մարմնին, որի տարածքում գտնվում են ենթակառուցվածքի օբյեկտները (այսուհետ՝ լիազորված մարմին).

բ) անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու կապակցությամբ հայտի ուսումնասիրումը.

գ) անհրաժեշտության դեպքում լիազորված մարմնի կողմից անվտանգության կառավարման համակարգի աուդիտի անցկացումը՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում գտնվում են ենթակառուցվածքի օբյեկտները.

դ) լիազորված մարմնի կողմից անվտանգության հավաստագրի տրամադրման (տրամադրումը մերժելու) մասին որոշման ընդունումը։

12. Անվտանգության հավաստագիրն ստանալու նպատակներով ներկայացվող բոլոր փաստաթղթերը ներկայացվում են ռուսերենով կամ այն անդամ պետության պետական լեզվով, որի տարածքում գրանցված է

ենթակառուցվածքի օպերատորը, և չպետք է պարունակեն ուղղումներ կամ լրացումներ, իսկ դրանք այլ լեզվով ներկայացնելու դեպքում դրանց կցվում է սահմանված կարգով վավերացված ռուսերեն թարգմանությունը։

13. Անվտանգության կառավարման համակարգի աուդիտի անցկացմանը լիազորված մարմնի որոշմամբ կարող են մասնակցել ենթակառուցվածքի օպերատորի, ինչպես նաև համապատասխան կազմակերպությունների մասնագետները։

14. Հավաստագրման ընդհանուր ժամկետը չպետք է գերազանցի 3 ամիսը՝ հայտը ներկայացնելու օրվանից մինչև լիազորված մարմնի կողմից անվտանգության հավաստագրի տրամադրման (տրամադրումը մերժելու) մասին որոշումն ընդունելը։

15. Անվտանգության հավաստագիրը ձևակերպվում է լիազորված մարմնի կողմից ըստ հավելվածի համաձայն սահմանված ձևի։

16. Անվտանգության հավաստագիրը տրամադրվում է լիազորված մարմնի կողմից՝ գործողության ժամկետի նշումով։ Անվտանգության հավաստագրի գործողության ժամկետը կազմում է ոչ պակաս, քան 1 տարի և ոչ ավելի, քան 5 տարի։

17. Անվտանգության հավաստագիրը ենթակա չէ այլ անձի փոխանցման։

18. Անվտանգության հավաստագրի տրամադրումը կարող է մերժվել հետևյալ դեպքերում՝

ա) փոխադրողի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջներին.

բ) աուդիտի արդյունքներով փոխադրողի անվտանգության կառավարման համակարգը չի համապատասխանում անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջներին.

գ) փոխադրողը հրաժարվում է անվտանգության կառավարման համակարգի աուդիտ անցկացնելուց կամ խոչընդոտում է դրան։

19. Անվտանգության հավաստագրի տրամադրումը մերժելու դեպքում լիազորված անձը փոխադրողին է տրամադրում եզրակացությունը՝ նշելով մերժման պատճառները։

ՀԱՎԵԼՎԱԾ

Երկաթուղային տրանսպորտում անվտանգության
հավաստագրի և դրա տրամադրման կարգի
առնչությամբ պահանջների նկատմամբ
ընդհանուր մոտեցումների

ՁԵՎ

անվտանգության հավաստագրի

_____
(լիազորված մարմնի անվանումը)

Անվտանգության հավաստագիր

Թիվ_____

Տրված է _____

Գործողության ժամկետը՝_____

Իրավաբանական անձի հասցեն՝ _____

Սույն հավաստագիրը հավաստում է, որ անվտանգության կառավարման համակարգը համապատասխանում է երկաթուղային տրանսպորտի ոլորտում

_____
(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության անվանումը)

օրենսդրությամբ սահմանված պահանջներին

Լիազորված մարմնի ղեկավար

կամ նրա կողմից լիազորված անձ _____ _____
(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Կ.Տ.

Տրամադրման ամսաթիվը «____»_____ 20____թ.

Ծանոթագրություններ. 1. Սույն հավաստագիրը ենթակա է կասեցման կամ հետկանչի երկաթուղային տրանսպորտի ոլորտում

_____

(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության անվանումը)

օրենսդրությամբ նախատեսված դեպքերում։

2. Հավաստագիրը կորցնելու (վնասելու) դեպքում փոխադրողը պարտավոր է լիազորված մարմին դիմում ներկայացնել՝ նշելով հավաստագիրը կորցնելու (վնասելու) հանգամանքները։

_____